(Կազմված է 23.11.2022թ. և բաղկացած է 12 թերթից)

Տպագրված է ընամենը 3 օրինակ

ՕՐԻՆԱԿ_1_

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022թ.ԹՎԱԿԱՆԻ
24 ՆՈՅԵՄԲԵՐԻ ԹԻՎ 2168-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՎ

ՆԱԽԱՐԱՐ _____
Վ.ԴՈՒՄԱՆՅԱՆ

«29» նոյեմբեր, 2022թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

«14» 12 2022թ.

գրանցման համար՝ 222.210.1282816

ՀՎՀՀ՝ 02880985

աշխատակից՝

02

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Երևան 2022թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է երաժշտարվեստի, պարարվեստի և երգարվեստի բնագավառում գործունեություն իրականացնելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի ««Հայաստանի պարի պետական անսամբլ», «Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթ», «Թ.Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի ապրիլի 17-ի N 419 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման համաձայն Կազմակերպությունը՝ «Հայաստանի պարի պետական անսամբլ» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 286.210.04878), «Հայաստանի պարարարվեստի «Բարեկամություն» պետական համույթ» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 286.210.04880) և «Թ.Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթ» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 286.210.04855) միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում հիմնադրված պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը հանդիսանում է «Հայաստանի պարի պետական անսամբլ», «Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթ», «Թ.Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:
3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարության:
4. Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից՝ առանց ժամկետային սահմանափակման:
5. Կազմակերպությունը գործում է լիազորված պետական մարմնի՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ:
6. Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին

Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով: Կազմակերպությունն իր գործունեության շրջանակներում ղեկավարվում է միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ:

7. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
8. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:
9. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ:
10. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:
11. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով: Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ հիմնադրի պարտավորությունների համար:
12. Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:
13. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն Կանոնադրությանը համապատասխան՝ Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, իսկ Հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:
14. Կազմակերպության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
15. Կազմակերպությունում չի թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

16. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում հիմնադրված և գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ, եթե դա չի հակասում սույն Կանոնադրությամբ ամրագրված նպատակներին:
17. Կազմակերպության անվանումն է՝
   - Հայերեն լրիվ՝ **«ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն**,
   - Հայերեն կրճատ՝ **«ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ**,
   - Ռուսերեն լրիվ՝ **государственная некомерческая организация "Национальный центр народной музыки и танца"**,
   - Ռուսերեն կրճատ՝ **ГНКО "Национальный центр народной музыки и танца"**,
   - Անգլերեն լրիվ՝ **"National Center of Folk Music and Dance" Non-commercial State Organization**,
   - Անգլերեն կրճատ՝ **"National Center of Folk Music and Dance" NCSO.**
18. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 46:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

19. Կազմակերպության գործունեության հիմնական առարկան ժողովրդական երաժշտության և պարարվեստի ոլորտներում միասնական մշակութային գործունեության իրականացումն է:
20. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

   1) ժողովրդական երաժշտության և պարարվեստի ոլորտներում կատարողական արվեստի ավանդույթների պահպանումն ու զարգացումը,

   2) հասարակության հոգևոր պահանջների ձևավորումն ու բավարարումը,

   3) գեղարվեստական բարձրարժեք արդյունքի ապահովումը և կատարողական արվեստի քարոզչությունը,

   4) ժողովրդական երաժշտության և պարարվեստի հանրային վարկանիշի բարձրացումը և միջազգայնացումը,

   5) ժողովրդական երաժշտական ստեղծագործություններին ու մշակույթին հանրությանը հաղորդակից դարձնելը:
21. Կազմակերպությունն իր գործունեության նպատակներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

   1) կազմակերպում է համերգներ և նմանատիպ այլ միջոցառումներ,

2) ինքնուրույն ձևավորում է իր երաժշտախմբերը, պարախմբերը և մենակատարներին,
3) անկախ է իր գործունեության գեղարվեստական ստեղծագործական ուղղությունների, երգացանկի ընտրության մեջ, ինքնուրույն ընդունում է որոշումներ՝ համերգի հրապարակային կատարման և գովազդային նյութերի հրապարակման և նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ,
4) պայմանագրային և օրենքով սահմանված այլ հիմունքներով օգտագործում է մտավոր սեփականության օբյեկտներ,
5) ձևավորում է իր գործունեության զարգացման ծրագիրը, որոշում միջոցառումների տոմսերի և իր կողմից մատուցվող ծառայությունների և կատարվող աշխատանքների կարգն ու պայմանները /ներառյալ արժեքը և վճարման կարգը/, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով,
6) որոշում է իր կողմից ստեղծված համերգային ծրագրի օգտագործման եղանակը, այդ համերգի ռադիո և հեռուստահաղորդման, նյութական կրիչներով նկարահանման, ձայնագրման, բազմացման, տարածման, իրացման և կրկնօրինակման իրավունքների լրիվ կամ մասնակի երրորդ անձանց փոխանցման կարգը,
7) որոշում է Կազմակերպության գործունեության զարգացման հեռանկարային ծրագրերը՝ կնքված պայմանագրերի, իրականացվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների պահանջներին համապատասխան,
8) Կազմակերպության գործունեությանը պայմանագրային հիմունքներով ներգրավում է երրորդ անձանց,
9) Կազմակերպության ստեղծագործական ներուժի վերարտադրման նպատակով երաժշտության, պարարվեստի, երգարվեստի և հարակից այլ բնագավառներում ծավալում է կրթական գործունեություն, մասնավորապես, ստեղծում և ղեկավարում է տարատեսակ կրթական հաստատություններ, ստուդիաներ, որոնց գործունեությունն ուղղված է Կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացմանը, իսկ դրանց Կանոնադրությունը և գործունեության ծրագիրը, տնօրենի ներկայացմամբ, համաձայնեցվում է լիազորված պետական մարմնի հետ և հաստատվում է տնօրենի հրամանով,
10) կազմակերպում և անցկացնում է ստեղծագործական ստուգատեսներ, փառատոներ և մրցույթներ,
11) կազմակերպում և անցկացնում է ստեղծագործական խմբերի և անհատ կատարողների հյուրախաղեր,
12) օգտագործում է իր ձևաթղթերը, անվանումն ու խորհրդանիշը գովազդի նպատակով, ինչպես նաև թույլատրում է դրանց օգտագործումը երրորդ անձանց,

13) ապահովում է Կազմակերպությանն ամրացված շենքերի ու շինությունների պատշաճ պահպանության և օգտագործման համար անհրաժեշտ ռեժիմը /իրականացնում հակահրդեհային և անվտանգության այլ միջոցառումներ/,

14) կազմակերպում և անցկացնում է երաժիշտ-կատարողների, երգիչների, պարողների բաց հրապարակային մրցույթներ՝ վերակազմավորման կամ համալրման նպատակով:

22. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) թատերահամերգային դահլիճներում համերգային և գովազդային գործունեություն՝ կապված իր հիմնական գործունեության հետ,

2) հրատարակչական գործունեություն՝ համերգային ազդագրերի, ծրագրերի, բուկլետների պատրաստում,

3) իրավաբանական և ֆիզիկական անձանց պատվերով երաժշտական ստեղծագործությունների կլավիրների, պարտիտուրաների ստեղծում և հրատարակում, համերգների կազմակերպում,

4) կազմակերպության գործունեությունից բխող արտադրական գործունեության իրականացում և արտադրանքի իրացում,

5) ժողովրդական երաժշտության և պարարվեստի ոլորտներում մասնագիտական առարկաների դասավանդում՝ մինչև մեկ տարի ժամանակով, ինչպես նաև մասնագետների վերապատրաստում,

6) հանրային սննդի կազմակերպում այնքանով, որքանով այդ գործունեությունը ծառայում ու համապատասխանում է Կազմակերպության ստեղծման նպատակին և դրա իրականացմանը:

23. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

24. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն Կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

25. Պետական բյուջեով Կազմակերպության համար ուղղակի նախատեսված միջոցների սահմաններում Կազմակերպության կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է օրենքով նախատեսված կարգով:

26. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

27. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից: Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

28. Կազմակերպությունն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հիմնադրի որոշումներին և (կամ) սույն Կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

29. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ Հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

30. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

31. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

32. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, Հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները: Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

33. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

34. Հիմնադիրն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

35. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

36. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից, սահմանված կարգով, հանձնել վարձակալության, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

37. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

38. Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

39. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպության ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

40. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

41. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը և գործադիր մարմինը՝ տնօրենը:

42. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

43. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Կազմակերպության հիմնադրումը,
2) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
3) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

44. Լիազորված պետական մարմինն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

45. Լիազորած պետական մարմինը՝

1) իրականացնում է Կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
2) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

4) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

5) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

6) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

7) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, եթե պետական կազմակերպությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին,

8) հաստատում է Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը,

9) հաստատում է Կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները,

10) սահմանում է Կազմակերպության կառավարման համակարգը,

11) իրականացնում է Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և հաստատում է լուծարման հաշվեկշիռը,

12) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով, հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Կազմակերպության տնօրենը՝

1) Կազմակերպության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է Հիմնադրի կողմից լիազորած պետական մարմնի ղեկավարը:

2) Կազմակերպության տնօրենին պաշտոնի նշանակելն ու պաշտոնից ազատելը կարգավորվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

3) Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն Կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ նրա կողմից

լիազորված պետական մարմնի որոշումների, սույն Կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4) Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

5) Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Կազմակերպության տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

6) Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում նրան պաշտոնի նշանակած մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

7) Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

47. Կազմակերպության տնօրենի լիազորություններն են՝

1) առանց լիազորագրի հանդես գալ Կազմակերպության անունից, ներկայացնել նրա շահերը, կնքել գործարքներ Կազմակերպության անունից,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինել Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3) տալ Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,

4) աշխատանքի ընդունումը և Կազմակերպության աշխատողներին աշխատանքից ազատումը, նրանց նկատմամբ խրախուսման միջոցների և կարգապահական տույժերի կիրառումը,

5) պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում հաշիվների բացումը,

6) իր տեղակալների միջև աշխատանքի բաշխման իրականացումը,

7) Կազմակերպության կառուցվածքի սահմանումը, կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանումը,

8) Կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների Կանոնադրությունների հաստատումը,

9) Կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարների նշանակումը, նրանց համապատասխան լիազորագրերի տրամադրումը,

10) սահմանված կարգով Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի ներկայացումը լիազորված պետական մարմին,

11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում հրամանների, հրահանգների արձակումը, կատարման համար պարտադիր ցուցումներ տալը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

12) Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքների կազմակերպումը,

13) Կազմակերպության տրանսպորտային միջոցների օգտագործման կարգի վերաբերյալ որոշումների կայացումը,

14) Կազմակերպության ընդհանուր և առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերի, ներքին կարգապահական և այլ կանոնների հաստատումը,

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակեպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

48. Կազմակերպության գործունեության հիմնական հարցերի քննարկման, ստեղծագործական և կազմակերպչական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով տնօրենին առընթեր կարող է ստեղծվել խորհրդակցական մարմին՝ գեղարվեստական խորհուրդ: Գեղարվեստական խորհուրդն իր գործառույթներն իրականացնում է տնօրենի կողմից հաստատված կանոնակարգի հիման վրա:

49. Կազմակերպության կազմում գործում են հետևյալ ստեղծագործական խմբերը (որպես կառուցվածքային ստորաբաժանումներ)՝

- «Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի համույթ»,
- «Պարի պետական անսամբլ»,
- «Բարեկամություն» պարարվեստի համույթ»:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

50. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

51. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
52. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
53. Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել Հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
54. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով: Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:
55. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Բաղկացած է 12 /տասներկու/ թերթից

02